ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 12/1109106 «07» 09 2021թ.

«ՍՈՆԱՐՏ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՍՈՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՍՈՆԱՐՏ» ՍՊ ընկերության միջև 16.07.2021 թվականին կնքվել է «ԵՔ- ԲՄԱՊՁԲ-21/15-4» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Երևանի քաղաքապետարան 26.08.2021 թվականին մուտքագրված Ձեր համապատասխան գրությամբ տեղեկացրել եք, որ ընկերությունը չնախատեսված խոչընդոտների պատճառով հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/15-4» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրել եք լուծարել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հիմք ընդունելով «ՍՈՆԱՐՏ» ՍՊ ընկերության դիմումը վերոնշյալ պայմանագիրը լուծարելու վերաբերյալ, Երևանի քաղաքապետարանը,

ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն «Ամերիաբանկ» ՓԲԸ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները Երևանի քաղաքապետարանի համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազորված պետական մարմին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.Ն.Սարգսյան
Ա.Գաբրիելյան
Հեռ.011514249